
**ՓՈՔՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԵՆԵԶԻՍԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՍԱՀՄԱՆՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ**

ՆԱԿԱՍԱՐԴՅԱՆ Ա. Գ.

Մեծ տերությունների արտաքին քաղաքականության կարևոր խնդիրների ուսումնասիրության կողքին փոքր պետությունները գրեթե դուրս են մնացել քաղաքագետների և դիվանագիտության տեսաբանների ուշադրությունից: Մինչդեռ դրանք գոյացել են մարդկության պատմության սկզբնավորումից ի վեր: Քաղաք-պետություններից է կազմված եղել Հին Հունաստանը: Հռոմեական կայսրության արտաքին սահմաններին հարել են վասալական փոքր պետություններ, որոնք կոչվել են «լիմիտրոֆներ»¹: Երեք հազար տարի առաջ չինական քաղաքակրթության ծաղկման շրջանին են վերագրվում կենտրոնի կապերը ծայրամասային, բուֆերային պետությունների («վայ-ֆան») և փոքր իշխանություն-պետությունների («վայ-գո») հետ: Միջնադարյան Եվրոպան զգալիորեն կամ ամբողջովին եղել է փոքր դքսությունների և գաճաճ պետությունների խճապատկեր: Եվրոպական քաղաքական քարտեզի ձևավորման, ինչպես նաև փոքր պետությունների պետական ամրապնդման գործում վճռորոշ նշանակություն ունեցան Երեսնամյա պատերազմի ավարտն ազդարարող Վեստֆալյան պայմանագրի ստորագրումը (1648 թ.), նույն դարի կեսերին միջազգային հարաբերություններում «պետություն» հայեցակարգի հաստատումը, XIX դարի սկզբին՝ նապոլեոնյան պատերազմների ընթացքում ազգայնականության զարգացումը և Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո միջազգային իրավունքի ամրապնդումը:

Փոքր պետությունների առաջացումը և անհետացումը փոփոխական գործընթաց է՝ հաճախ պայմանավորված միջազգային ասպարեզում խոշոր պետությունների միջև ուժային հավասարակշռությամբ: XX դարի սկզբին մի շարք ազգ-պետություններ համալրեցին փոքր պետությունների շարքերը: Մյուս կողմից՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Եվրոպայի որոշ փոքր պետություններ ընդհանրապես դադարեցին միջազգային իրավունքի սուբյեկտ լինելուց, իսկ ավելի ուշ՝ սառը պատերազմի տարիներին այդ կարգի պետությունների ինքնիշխանությունը որոշ չափով

¹ Дипломатический словарь, М., 1986, т. 2, с. 146.

սահմանափակվեց: Սակայն անցյալ դարի վերջին դրանցից շատերը վերականգնեցին իրենց ինքնիշխանությունն ու անկախությունը: Գլոբալ առումով՝ փոքր պետությունների քանակի աճը գաղութատիրական համակարգի վերացման արդյունք է: XX դարի վերջին ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի փլուզման հետևանքով զգալիորեն աճեց փոքր պետությունների թիվը Եվրոպայում և Ասիայում: Քաղաքագիտության համակարգում այսօր որոնք են փոքր պետություններ և ինչ դեր ունեն միջազգային հարաբերություններում: Բոլոր այն պետությունները, որոնք ՄԱԿ-ի անվտանգության մշտական անդամ չեն, մտնում են փոքր պետությունների կատեգորիայի մեջ: Ըստ դիվանագիտության պատմության ամերիկյան ճանաչված հեղինակ Է. Պլիշկեի՝ դրանք այն երկրներն են, որոնց բնակչությունը չի անցնում 5 միլիոնից²: Իսկ անգլիացիները փոքր են համարում այն պետությունները, որոնց բնակչությունը մեկ միլիոնից պակաս է՝ անվանելով դրանց մինի պետություն³: Վերջերս ամերիկյան քաղաքագիտական բառաֆոնդում փոքր պետությունների համար հայտնվեց նոր եզր՝ «հաճախորդ-պետություններ», որը «լիմիտրոֆի» հոմանիշն է: (Մասնագետների կարծիքով դրա հեղինակը Զբիգնև Բժեզինսկին է):

Փոքր պետությունները ֆինանսական ու տեխնիկական սահմանափակության պատճառով հաճախ խուսափում են ծախսատար դեսպանություններ պահելուց և փոխարենը դիվանագիտական գործունեությունը կենտրոնացնում են փոքր թվով միջազգային կազմակերպություններում, օրինակ՝ ՄԱԿ-ում: Դիվանագիտական նման պրակտիկան ստացել է «զեղչված դիվանագիտություն» («cut-price diplomacy») անվանումը, որը հատուկ է «սահմանափակ ինքնիշխանություն» ունեցող ձևականորեն անկախ պետություններին⁴: Այսուհանդերձ, միկրոպետություններ, փոքր, ավելի փոքր, միջին, մեծ պետություններ և վերջապես գերտերություններ հասկացողությունները մեր կարծիքով վիճահարույց են և այսօր էլ քաղաքագիտության մեջ չունեն հստակ սահմանում:

XX հարյուրամյակում և մինչև դարավերջ պետությունները եվրոպական լեզուներով կոչվում էին «հզորություններ» կամ «ուժեր» (ֆրանսերեն՝ *puissance*, գերմաներեն՝ *die Macht*, ռուսերեն՝ *держава*, իսպաներեն ու պորտուգալերեն՝ *poder* և այլն): Այս եզրույթը ներկայումս ևս օգտագործվում

²Plischke E. *Modern Diplomacy. The Art and the Artisans*. Wash. D. C. 1979, p. 96.

³Berridge G. R. & James A. *A Dictionary of Diplomacy*, Hampshire, Pajgrave, 2001.

⁴Berridge G. R. and James A. *Diplomacy. Theory and Practice*, 2nd ed. Leichester, 2000, p. 57.

է պետությունների տարբեր կատեգորիաների՝ մասնավորապես մեծ, երբեմն էլ նաև միջին ուժերի համար, իսկ փոքր պետություններն ուղղակի դասվում են փոքր ուժերի շարքին, որը, անկասկած, ավելի է ընդգծում դրանց հզորության ենթադրյալ պակասը:

ՄԱԿ-ի ստեղծումը, որը վճռորոշ նշանակություն ունեցավ փոքր երկրների ճակատագրերի համար, նույնպես պարզություն չմտցրեց «փոքր պետություն» սահմանման համար: Այդուհանդերձ, ՄԱԿ-ը միջպետական հարաբերություններում միջազգային իրավունքի կիրառման ամենավստահելի համաժողովն է, նպաստելով տարբեր ոլորտներում իրավական դաշտի մշտական ձևավորմանը: Սա պայմանավորված է նրանով, որ ՄԱԿ-ն ընդգրկում է հավասար իրավունքներ ունեցող գրեթե բոլոր երկրները, ինչն առանցքային նշանակություն ունի փոքր պետությունների համար: ՄԱԿ-ի ուժը պայմանավորված է աշխարհի պետությունների համապարփակ անդամակցությամբ և այն փաստով, որն անդամակցությունը դիտարկվում է որպես անդամ պետությունների անկախության մշտական երաշխիք: Եթե ստեղծման պահին ՄԱԿ-ին անդամակցում էր 51 պետություն, ապա ներկայումս դրանց թիվը հասել է 191-ի, ընդ որում՝ անդամ երկրների մեծ մասը փոքր պետություններն են: ՄԱԿ-ի շրջանակում գործում է այսպես կոչված Փոքր պետությունների համաժողովը, որի անդամ են 88 երկրներ՝ մոտ 10 միլիոն բնակչությամբ: Հնարավոր է արդյոք, որ հանրային անվտանգության և բարեկեցության, աշխարհաքաղաքական ազդեցության համեմատ բնակչությունը լինի 10 միլիոնից պակաս կամ մի փոքր ավելի: Մի թե գոյություն ունի աքսիոմա, որ քիչ բնակչություն ունեցող պետությունները թույլ են շատ բնակչություն ունեցողներից: Շվեդիայի բնակչությունը, օրինակ, հավասար է Փարիզի բնակչությանը, իսկ ֆրանսիացիները քանակով գրեթե հավասար են Չինաստանի Հունան նահանգի բնակչությանը: Բայց դա չի ենթադրում, որ Շվեդիան և Փարիզը, Ֆրանսիան և Հունանն ունեն միևնույն համակարգային արժեքներն ու դիրքորոշումները:

Պետության չափի գնահատման հետ մեկտեղ կարևորվում են դրա բնակչության, աշխարհագրական տարածաշրջանի և տնտեսության հավասարակշռությունը: Հետաքրքիր է, որ այսպես կոչված «ձախողված» պետությունները միջին չափի կամ մեծ պետություններ են: Նույնիսկ եթե ստեղծվեր «փոքր պետություն» հասկացության միջազգային սահմանում, պարզ է, որ դա չէր լինի միատարր խումբ:

Տարբեր հանգամանքներն ու շահերը միջազգային հարաբերություններում տարբեր կերպ են ազդում փոքր պետությունների վրա: Օրինակ՝ սառը պատերազմի ավարտից հետո շատ փոքր պետությունների ազդեցությունը որոշակիորեն սահմանափակվեց, շատերն էլ ձեռք բերեցին անկախություն: Փոքր պետությունները ստիպված հարմարեցրին իրենց արտաքին քաղաքականությունը փոխված աշխարհին, որտեղ ավելացել կամ նվազել էին նրանց գործունեության շրջանակները: Փոքր պետությունների հանկարծակի աճը նրանց դարձնում է միջազգային հարաբերությունների ուշադրության օբյեկտ, քանի որ իրականում նոր անկախացած պետություններն առաջացնում են հրատապ լուծում պահանջող բազմաթիվ լուրջ խնդիրներ:

Փոքր պետությունների ծագման և սահմանման շրջանակներում կարևորվում է միկրոպետությունների ուսումնասիրման հարցը, որը գրեթե դուրս է մնացել մասնագետների ուշադրությունից: Միկրոպետությունները երբեմն անվանվում են երկրի մոդել և հանդիսանում են փոքր, ինքնահռչակված կազմակերպություններ, որոնք իրենց հայտարարում են անկախ, ինքնիշխան պետություններ, սակայն ճանաչված չեն որպես այդպիսի որևէ այլ ինքնիշխան պետության կամ վերազգային կազմակերպության կողմից: Միկրոպետության ստեղծման դրդապատճառը կարող է լինել տեսական փորձը, քաղաքական բողոքը, անձնական քմահաճույքը, հանցավոր գործունեությունը և այլն: Միկրոպետությունները գոյություն ունեն տարբեր ձևերով՝ ֆիզիկական աշխարհում, ցամաքում, ծովում, տիեզերական տարածքում, համացանցում կամ դրանց հիմնադիրների գիտակցության մեջ: Որոշ միկրոպետություններ ունեն իրենց դրամը, դրոշմը, փոստային դրոշմանիշները, մեդալները և այլ առարկաներ: Վերջին տվյալներով աշխարհում գոյություն ունի 59 միկրոպետություն⁵: Անցյալ դարի վերջերին ՄԱԿ-ի շրջանակներում բորբոքվեցին կրքեր միկրոպետությունների անդամակցության շուրջ, սակայն դրանք շուտով մոռացության մատնվեցին, և տեղի չունեցավ նրանց ակնկալած անդամակցումը ՄԱԿ-ին: Այնուամենայնիվ, Լիխտենշտեյնը, Մոնակոն, Անդորրան, Սան Մարինոն և մի քանի այլ միկրոպետություններ անդամակցեցին ՄԱԿ-ին (1990-ական թթ.), երբ ընդունեցին միջազգային ընտանիքում հավասար ինքնիշխանության պայմանները: Իսկ Կոստա Ռիկան որոշեց հայտ չներկայացնել, քանի որ գիտակցում էր, որ չի կարողանալու բավարարել անդամակցության պայմանները: Դրա հետևանքով Կոստա Ռիկան փոքրից վերածվեց միկրո-

⁵<http://dic.academic.ru/dic.nsf/ruwiki/1335308>

պետության: Հարկ է միկրոպետությունները չշփոթել գաճաճ պետությունների հետ, քանի որ նրանք համարվում են ճանաչված ինքնիշխան պետություններ: Գաճաճ ընդունված է համարել այն պետությունը, որն իր տարածքով զիջում է Լյուքսեմբուրգի տարածքին (2.586 քառ. կմ), չնայած նրան ևս երբեմն դասում են գաճաճների շարքը: Հաճախ որպես չափանիշ ընդունում են բնակչության թիվը: ՄԱԿ-ի և Համաշխարհային բանկի չափանիշներով գաճաճ են կոչվում այն պետությունները, որոնց բնակչության թիվը չի անցնում մեկ միլիոնից: Ազգերի Համագործակցությունն իր զեկույցներում երբեմն գաճաճ պետությունների համար օգտագործում է «փոքր երկրներ» եզրը՝ սահմանելով բնակչության 1,5-միլիոնանոց շեմ: Իսկ երբեմն գաճաճ են կոչվում այն պետությունները, որոնց բնակչությունը պակաս է 500 հազար մարդու: ՄԱԿ-ի կողմից ազգերի ինքնորոշման հռչակումը հիմք հանդիսացավ հարյուրավոր փոքր, գաճաճ և միկրոպետությունների ստեղծման համար, որոնց ներհոսքին համաշխարհային կազմակերպություն հաջորդեցին սուր բանավեճերը՝ հատկապես միկրոպետությունների հարցում. ինչպե՞ս են նրանք օգտագործելու իրենց հավաքական ձայնի իրավունքը Գլխավոր Ասամբլեայում, ովքե՞ր են ֆինանսավորելու նրանց որոշումները, արդյո՞ք այդ կատեգորիայի պետություններին առաջարկվելու է սահմանափակ անդամակցություն և այլն: Իսկ ըստ Հավայայի համալսարանի պրոֆեսոր Մ. Հասի՝ ՄԱԿ-ի անդամ փոքր, գաճաճ և միկրոպետություններն ստիպված են բավարարվել միջազգային իրավունքին ենթարկվողի դերով⁶: Անգլիացի հայտնի իրավաբան Ջ. Շվարցենբերգերի մեկնաբանությունն ավելի «հուսահատական է» փոքր պետությունների համար, և ոչ միայն: «Ուժն է որոշում, - գրում է քաղաքագետը, - միջազգային արհեստակրատիայի հիերարխիայում անկախ պետությունների դերը»⁷: Նման կարծիքներ հնչում են նաև մեր օրերում⁸: Ընդհանուր առմամբ, միջազգային հարաբերություններում ուշադրության կենտրոնում բացառապես մեծ պետություններն են, որի պատճառով էլ փոքր երկրների և՛ կատեգորիան, և՛ կարգավիճակը մնում են առկախված: Փոքր պետությունները տեղակայված են երկու անորոշ ենթատեսակների միջև՝ միջին ուժերի, որոնք համոզված են, որ կոնկրետ ոլորտում հզորություն են ձեռք բերել, և միկրոպետությունների, որոնք իրենց հերթին վարչական ներուժի բացակայության հետևանքով չեն կարողանում ամբողջությամբ անդամակցել

⁶International Politics and Foreign Policy, N. Y., 1969, p. 138.

⁷Schwarzenberger G. The Frontiers of International Law, L., 1962, p. 23.

⁸Zemanek K. General Course of International Law //RdC, 1997, t. 266, p. 44.

համակարգային կառույցներին: Փոքր պետությունների՝ համաձայնեցված ճշգրիտ սահմանման ու դրանց մասին գրականության բացակայությունը թելադրում է խոր ուսումնասիրությունների անհրաժեշտություն, որն այսօր էլ դեռևս սաղմնային վիճակում է: Դիպուկ է նկատել Կոհենը, երբ ասել է՝ եթե թզուկները կարողացան կապել Գուլիվերին, ուսումնասիրել նրան և ստիպել կովել իրենց համար, նրանք ևս պետք է հանգամանորեն ուսումնասիրվեն:

ГЕНЕЗИС МАЛЫХ ГОСУДАРСТВ И ВАРИАНТЫ ИХ ОПРЕДЕЛЕНИЯ

НАВАСАРДЯН А. Г.

Резюме

Вопросы генезиса и определения малых держав в современных международных отношениях обретают особую значимость в силу борьбы за создание нового многополярного мира, поскольку в этих процессах возрастает роль малых государств. Следует отметить, что ООН играет ключевую роль в судьбе малых государств, в защите их прав и предоставлении гарантий независимости.

THE GENESIS OF SMALL COUNTRIES AND THE VERSIONS OF THEIR DETERMINATION

A. NAVASARDYAN

Abstract

The author of the article referred to the origin and determination of small countries, which are less publicized by the political and diplomatic theory. They get great importance in current international relations and in the sharp struggle of the creation of a new multipolar world, seeing the importance and the increasing role of small states in those processes. There is reference made by different theorists about the small states' definitions and descriptions. The key role of the UN is very important in the case of guarantee of the fate of small nations, their rights and independence. The author's observations are very remarkable about dwarf and micro states, if we take into account, that this theme has been escaped from the attention of researchers altogether.